

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հաստուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա օգոստոսի 26-ին կայացած նիստի

### Օրակարգ

1. ՊԴԱ անձնակազմի տարեկան ծանրաբեռնվածության ներկայացում:
2. 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակի հիբրիդային ուսուցման մասին քննարկում և հաստատում:
3. 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման բակալավր 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման որոշում և նախապատրաստում:
4. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման քննարկում:
5. Առկա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի շարունակական պրակտիկայի կազմակերպման քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:
  1. **Լսեցին** - ՊԴԱ անձնակազմի տարեկան ծանրաբեռնվածության ներկայացման և հաստատման հարցը:

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչի տեղակալ՝ Գ.Ռ.Հովյան/

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը:

**Որոշեցին** – Հաստատել ՊԴԱ անձնակազմի տարեկան ծանրաբեռնվածությունը և ս/թ. սեպտեմբերի 7-ին կայանալիք նիստում հաստատել ներկայացվող առարկայական նկարագրերն ըստ յուրաքանչյուրի ծանրաբեռնվածության:

2. **Լսեցին** - 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակի հիբրիդային ուսուցման մասին քննարկման և հաստատման մասին հարցը:

Ամբիոնի վարիչի տեղակալ Գ. Հովյանը ներկայացրեց համալսարանի ղեկավարության և ըստ այդմ, դեկանի կողմից ընդունված որոշումն, ըստ որի ուսուցումն, այնուամենայնիվ կազմակերպվելու է հեռավար, իսկ առաջին կուրսեցները, ևս, մեկ շաբաթյա առկա ուսուցումից հետո անցնելու են հեռավար ուսուցման:

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը, Զ.Հարությունյանը, Մ.Հարությունյանը:

**Որոշեցին** – Հաստատել քննարկված հիմնական հարցերը, որոնք վերաբերվում են հիբրիդային ուսուցմանը, գնահատել իրականացված աշխատանքները, կրթական գործընթացների բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները, ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթները և դրանց առկայությունը ASPU Google Classroom-ում, համակարգչային և այլ միջոցների օգտագործումը ուսումնական գործընթացում և համապատասխան աշխատանք իրականացնել ուսանողության շրջանում՝ ապահովելով ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակն ու մշտադիտարկումը:

**3. Լսեցին** - 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման բակալավր 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման որոշում և նախապատրաստում:

Ամբիոնի մ.գ.թ., դոցենտ, պրակտիկայի պատասխանատու Ա. Գրիգորյանը ներկայացրեց 2019-2020 ուս. տարվա այս պրակտիկայի իրանացման հետ կապված խնդիրները:

**Արտահայտվեցին** – Ա.Գրիգորյանը, Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը, Մ.Հարությունյանը:

**Որոշեցին** – Քանի որ համավարակի հետևանքով հեռակա ուսուցման բակալավր 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացումն հետաձգվել էր և փաստացի չէր իրականացվել, որոշվեց այն անցկացնել հեռավար՝ նախապես համաձայնեցնելով համալսարանի պրակտիկայի վարչության և համապատասխան հաստատությունների տնօրենների հետ:

**4. Լսեցին** - 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման մասին հարցը:

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը, Մ.Հարությունյանը, Ա.Չարչյանը:

**Որոշեցին** - 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները ամբիոն ներկայացնել մինչև ս.թ սեպտեմբերի 7-ը և կայանալիք նիստում հաստատել 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: Կարևորվեց առարկայական նկարագրերում վերջնարդյունքների ճիշտ ձևակերպումը ՄԿԾ-երին համապատասխան, մասնավորապես շեշտադրելով մասնագիտական գիտելիքի և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների և ընդհանրական/փոխանցելի կարողությունների անհրաժեշտությունը: Նշվեց նաև առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների՝ ըստ սահմանված ժամկետի Google classroom տեղադրելու անհրաժեշտությունը համապատասխան պանակներում:

**5. Լսեցին** - Առկա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի շարունակական պրակտիկայի կազմակերպման հարցը:

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը, Մ.Հարությունյանը:

**Որոշեցին** - Առկա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի շարունակական պրակտիկան անցկացնել հեռավար՝ նախապես համաձայնեցնելով համալսարանի պրակտիկայի վարչության և համապատասխան հաստատությունների տնօրենների հետ:

**Ընթացիկ հարցեր:**

Ընթացիկ հարցերի քննարկման արդյունքում հիմնականում խոսվեց փոխադարձ դասալուսման գրաֆիկի և փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին, մասնավորապես, քննարկվեցին դասախոսության ճիշտ կառուցվածքի և դասավորվածության ձևաչափերը, ինտերակտիվ քննարկումների ծավալման անհրաժեշտությունը, կարևորվեց տեսասահիկների օգտագործումը, էլեկտրոնային հարթակում հաջորդ դասախոսության թեմայի վերաբերյալ հարցերի պատրաստման հանձնարարումը, հնչեցին որոշակի առաջարկություններ պրակտիկայի անցկացման և դասախոսությունների որակը բարելավելու ուղղությամբ:

**Արտահայտվեցին** - Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը:

**Որոշեցին**- 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի կրթական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների գործընթացը գնահատել դրական:

**Նիստի նախագահ՝**

**Ս. Գրիգորյան**

**Նիստի քարտուղար՝**

**Ա. Օհանյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա սեպտեմբերի 7-ին կայացած նիստի

### Օրակարգ

1. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման հարցը:
2. Ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում:
3. Բակալավր և մագիստրատուրա կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

1. **Լսեցին** – 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի, անհատական ուսումնական փաթեթների, առարկայական դասիչների և GOOGLE CLASSROOM էլեկտրոնային հարթակ տեղադրելու հաստատման հարցը:

2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ԱՌՄՓ ձևաչափով դասավանդման նախապատրաստվող դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ԱՌՄՓ ձևաչափի շրջանակներում կատարած աշխատանքի արդյունքները:

Ամբիոնի GOOGLE CLASSROOM էլեկտրոնային հարթակի պատասխանատու մ.գ.թ., դասախոս Է. Թադևոսյանը դասախոսներին հորդորեց տեղադրել դասավանդվող բոլոր դասընթացների էջերում անհրաժեշտ նյութերը:

**Արտահայտվեցին** –Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը,,  
Ա. Չարչյանը:

**Որոշեցին** – Հաստատել առարկայական նկարագրերը, ԱՌՄՓ ձևաչափերը և առարկայական դասիչները: /Առարկայացանկը և դասիչները կցված են/:

**2. Լսեցին-** 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա, հեռակա բակալավր և առկա մագիստրատուրա բաժինների ընտրովի դասընթացների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ 2020-2021 ուս. տարվա ծանրաբեռնվածության համաձայն առկա են ընտրովի դասընթացները:

**Արտահայտվեցին-** Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Կարապետյանը, Ս.Փալիկյանը

**Որոշեցին-** որպես ընտրովի դասընթացներ հաստատել հետևյալ թեմաները:

Ազգանուն, Անուն	Առարկա	Բաժին	Կուրս	Առարկայի դասիչը
Գրիգորյան Ստեփան	Ընտր/դաս (1) (մ) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հոգեբանամանկավարժական առողջագիտության հիմունքներ	Լոգոպեդիա Ա.Բ.	4	56- ab-015-hk-9- logopedia 4-1- 2020-2021
	Ընտր/դաս (1) Հատուկ մանկավարժության բժշկակենսաբանական հիմնախնդիրները	Արտթերապիա Ա.Մ.	2	56-am-030-hk-9- artterapia-2-1- 2020-2021
	Ընտր/դաս (3) Նեյրոգիտություն	Էրգոթերապիա Ա. Մ.	2	56- am-031-hk-9- ergoterapia-2-1- 2020-2021
Կարապետյան Սիրանուշ	Ընտր/դաս (2) Ժառանգական հիվանդություններով պայամանավորված խոսքի խանգարումների շտկման առանձնահատկությունները	Լոգոպեդիա Ա.Մ.	1	56-am-019-hk-9- logopedia-1-1- 2020-2021
Հովյան Գոհար	Ընտր/դաս (4)	Լոգոպեդիա	1	56- am-026-hk-9-

	Լոգոպեդական գնահատումը մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում	Ա.Մ.		logopedia -1-1-2020-2021
	Ընտր/դաս (1) Գլխուղեղ և խոսք: Նորմա և պաթոլոգիա	Լոգոպեդիա Ա.Մ.	2	56- am-044-hk-9- logopedia -2-1- 2020-2021
Կիրակոսյան Արմինե	Ընտր/դաս (3) Աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները	Լոգոպեդիա Ա.Մ.	2	56- am-035-hk-9- logopedia -2-1- 2020-2021
Գրիգորյան Աստղիկ	Ընտր/դաս (1) Երաժշտաթերապիայի դերը թերապևտիկ աշխատանքների համակարգում	Արտթերապիա Ա.Մ.	1	56- am-018-hk-9- artterapia -1-1- 2020-2021
Թադևոսյան Էմիլյա	Ընտր/դաս (6) Լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները հանրակրթությունում	Լոգոպեդիա Ա.Մ.	2	56- am-034-hk-9- logopedia -2-1- 2020-2021
Փալիկյան Սպարտակ	Ընտր/դաս (1) Խոսքի գենետիկա	Լոգոպեդիա Ա.Մ.	1	56- am-029-hk-9- logopedia -1-1- 2020-2021
Հարությունյան Մարիաննա	Ընտր/դաս (1) Էրգոթերապիան մանկաբուժության ոլորտում	Էրգոթերապիա Ա. Մ.	1	56- am-022-hk-9- ergoterapia-1-1- 2020-2021
	Ընտր/դաս (3) Քրոնիկ հիվանդությունների ազդեցությունը անձի գործունեության վրա	Էրգոթերապիա Ա. Մ.	1	56- am-023-hk-9- ergoterapia-1-1- 2020-2021
Հարությունյան Զարուհի	Ընտր/դաս (6) Վնասվածքաբանության և վերականգնողական գործընթացը Էրգոթերապիայում	Էրգոթերապիա Ա. Մ.	2	56- am-042-hk-9- ergoterapia-2-1- 2020-2021
	Ընտր/դաս (1) Էրգոթերապիան	Էրգոթերապիա Ա. Մ.	2	56- am-043-hk-9- ergoterapia-2-1-

	ներառական կրթության համակարգում			2020-2021
Չիլինգարյան Աննա	Ընտր/դաս (3) Հոգեախտաբանության ընդհանուր հիմունքները մանկավարժական պրակտիկայում	Լոգոպեդիա Ա.Մ.	1	56- am-027-hk-9- logopedia -1-1- 2020-2021
Ալվինա Հայրապետյան	Ընտր/դաս (3) Այլընտրանքային մեթոդները արտթերապիայում	Արտթերապիա Ա.Մ.	1	56-am-020-hk-9- artterapia-1-1- 2020-2021
	Ընտր/դաս (6) Հեքիաթաթերապիա	Արտթերապիա Ա.Մ.	2	56-am-037-hk-9- artterapia-2-1- 2020-2021
	Ընտր/դաս (3) Հոգեախտորոշումը նկարչական արտթերապիայի միջոցով	Արտթերապիա Ա.Մ.	2	56-am-038-hk-9- artterapia-2-1- 2020-2021

**3.Լսեցին** – Բակալավր և մագիստրատուրա կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

Ամբիոնի պրակտիկայի ղեկավար մ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը ներկայացրեց պրակտիկայի ժամանակացույցը, պրակտիկայի մեթոդիստներին, հոգեբաններին, մանկավարժներին:

**Արտահայտվեցին** –Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը:

**Որոշեցին** –տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա հոկտեմբերի 19-ին կայացած նիստի**

#### Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկում և հաստատում:
2. Լոգոպեդիա մասնագիտացման 3-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:
3. Բակլավար 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին
4. Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկում:

1. **Լսեցին**-Ավարտական աշխատանքների թեմաների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

Ամբիոնի վարիչի տեղակալ մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյանը ներկայացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաները քննարկված են գիտական ղեկավարների հետ, ովքեր պատասխանատվություն են կրում ընտրված թեմաների շրջանակներում իրականացվող պատշաճ հետազոտությունների իրականացման, ինչպես նաև՝ կրկնություններից խուսափելու համար /վերջին երեք տարիներին համընկնում, կրկնություն չի եղել/: Իսկ ինչ վերաբերվում է ուսանողների կողմից թեմաների ընտրության հարցին, Գ. Հովյանը նշեց որ, այդ նպատակով Google classroom

համակարգում ստեղծվել են էլեկտրոնային հարթակներ, որպեսզի դասախոսները և ուսանողները հնարավորություն ունենային միմյանց հետ հանդիպելու և քննարկելու թեմաները՝ մագիստրատուրա բաժնում, ինչ վերաբերվում է ավարտական աշխատանքների թեմաների ընտրությանը, դրանք ևս ամբիոնի մասնագետը առցանց ներկայացրել է ուսանողներին և առանց գիտական ղեկավարների ընտրվել են թեմաները, որից հետո ուսանողները ծանոթացել իրենց գիտական ղեկավարների հետ:

Գ. Հովյանը հավելեց նաև, որ նույն սկզբունքով ընտրվել են նաև Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մասնագետների կեղմից ղեկավարվող թեմաները:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ղեկան մ.գ.թ. պրոֆեսոր Սիրանուշ Կարապետյանը կարևորեց և ընդգծեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների ընտրության հարցը, որոնք պետք է փաստեն ուսանողի հմտությունը և ինքնուրույն գործելու կարողությունը: Ընդգծվեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բովանդակային առումով ճիշտ ձևակերպման անհրաժեշտությունը:

**Արտահայտվեցին** - Ս. Կարապետյանը, Գ. Հովյանը, Ս. Հարությունյանը, Ս. Փալիկյանը:

**Որոշեցին** – հաստատել 2020-2021 ուստարվա լոգոպեդիա մասնագիտացման առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և <<Լոգոպեդիա>>, <<Արտթերապիա>>, <<Էրգոթերապիա>> մասագիտացման մագիստրատուրա 1-ին կուրսերի թեմաները /Թեմաները կցված են արձանագրությանը/:

**2.Լսեցին-** Լոգոպեդիա մասնագիտացման 3-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման հարցը:

Ամբիոնի վարիչի տեղակալ մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյանը ներկայացրեց ամբիոնի ՊԴԱ ի կողմից ներկայացված թեմաները:

**Արտահայտվեցին** - Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը:

**Որոշեցին** – հաստատել Լոգոպեդիա մասնագիտացման առկա բակալավր 3-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաները:

**3. Լսեցին-** Բակալավր 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին:

Ամբիոնի դոցենտ, պրակտիկայի ղեկավար Ա. Գրիգորյանը ներկայացրեց առկա բակալավր 3-րդ կուրսի, պրակտիկայի ժամանակացույցը և հաստատությունները: Ինչ վերաբերվում է մագիստրատուրա 2-րդ կուրսերի պրակտիկային, ապա նշվեց, որ պրակտիկան, ըստ սահմանված ժամանակացույցի, կիրականացվի 26-10-2020 մինչև 09-11-2020 ՀՊՄՀ-ում: Նախապես ուսանողներին տրամադրվել է էլեկտրոնային դասացուցակը, GOOGLE CLASSROOM էլ. հարթակում ակտիվ են պատուհանները ըստ գիտ. ղեկավարների, ուսանողները կցված են այն առարկաների էլ. հարթակներին, որտեղ կիրականացնեն իրենց մանկավարժահետազոտական պրակտիկան (ցուցակը տեղադրված է պրակտիկայի ընթացքի վերաբերյալ քննարկման էլ հարթակում): Ա. Գրիգորյանը նշեց առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների տեղադրման անհրաժեշտության մասին և դասավանդելուց առաջ ուսանողներին դասախոսություններին ծանոթացնելու, ինչպես նաև դասի ընթացքում դասախոսի ներկայության պարտադիր լինելու մասին՝ հետագայում կատարելով ամփոփում և քննարկում:

**Արտահայտվեցին-** Ա. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը,

**Որոշեցին** – Ամբիոնի մ.գ.թ., դոցենտ, պրակտիկայի ղեկավար Ա. Գրիգորյանի զեկույցը ընդունել ի գիտություն:

**4. Լսեցին** – Google classroom էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների վերաբերյալ հարցը

2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակահատվածներում Google Classroom էլեկտրոնային հարթակում իրականացված աշխատանքների վերաբերյալ ամբիոնի

կողմից կատարվել է մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել է, որ ամբիոնի կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ դասախոսների կողմից բոլոր դասընթացների էլեկտրոնային հարթակներում տեղադրված են եղել առարկաների ԱՈՒՄՓ-ները կամ դասախոսությունները՝ ըստ թեմաների, առարկայական նկարագրերը: Գրեթե բոլոր դասընթացների էջերում առկա է դասախոսների և ուսանողների համագործակցությանը միտված ակտիվություն. լրացուցիչ ուսումնական նյութերի տեղադրում, հարցերի քննարկում, ուսանողների պատրաստած ներկայացումների կամ մշակումների տեղադրում և այլն:

Հարկ է նշել նաև, որ եղել են որոշակի դեպքեր, երբ դասերը չեն իրականացվել դասացուցակին համապատասխան՝ պայմանավորված դասախոսների գիտաժողովներին, գիտական հանդիպումներին մասնակցությամբ և գործուղումներով, վերոնշյալ դասերը տեղափոխվել են մեկ այլ աշխատանքային օր՝ նախապես համաձայնեցնելով ամբիոնի և ուսանողների հետ: Էլեկտրոնային դասացուցակում նույնպես նշվել է կատարված փոփոխության մասին:

Կարելի է արձանագրել, որ չնայած վերոնշյալ որոշակի դեպքերի, ամբիոնի բոլոր դասախոսների կողմից կանոնավոր կերպով կատարվել են բոլոր պահանջվող աշխատանքները, և առցանց ուսուցման վերաբերյալ որևէ դժվարություն, բողոք չի ներկայացվել թե՛ դասախոսների, և թե՛ ուսանողների կողմից:

**Արտահայտվեցին-Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը**

**Որոշեցին** –Ամբիոնի մ.գ.թ., ընդունել ի գիտություն:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա նոյեմբերի 16-ին կայացած նիստի

### Օրակարգ

1. Պրակտիկայի կազմակերպման և վերահսկողության ընթացքի վերաբերյալ քննարկում.

*1.1 Մազիստրատորա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների քննարկում*

*1.2 Առկա բակալավր 4-րդ կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում*

*1.3 Առկա բակալավր 3-րդ կուրսի շարունակական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ քննարկում*

2. Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկում

### 3. Ընթացիկ հարցեր

- Անբիոնի հայցորդ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը կրթական բարեփոխումների և վերականգնողական աջակցության կազմակերպման գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատաման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը

**Լսեցին** - Պրակտիկայի կազմակերպման և վերահսկողության ընթացքի վերաբերյալ հարցը:

/ Զեկուցող՝ մ.գ.թ. ., դոցենտ Ա. Գրիգորյան/:

Ամբիոնի պրակտիկայի ղեկավար մ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանի կողմից ներկայացվեց մագիստրատուրայի ուսանողների պրակտիկայի իրականացման հաջող ընթացքի հաշվետվությունը.

Ա. Գրիգորյանի կողմից, մասնավորապես, ընդգծվեց պրակտիկայի վարչության պետի կողմից կատարված հրահանգը, համաձայն որի յուրաքանչյուր պրակտիկայի ավարտին պրակտիկայի ղեկավարները պետք է ներկայացնեն հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

Քննարկվեց նաև չորրորդ կուրսերի պրակտիկայի ընթացքի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հարցը, ինչպես նաև ներկայացվեց պաշտպանության ժամանակացույցը:

Ա. Գրիգորյանը հավելեց, որ պրակտիկայից առաջ կազմակերպվել է նախնական կոնֆերանս, ուսանողներին տեղեկացրել, ծանոթացրել և բացատրվել են պրակտիկայի պահանջները և իրենց գործառույթները: Տրվել են հանձնարարականեր մանկավարժական պրակտիկայի թղթապանակը վարելու ուղղությամբ:

**Արտահայտվեցին** – Ա. Փալիկյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը, Մ.Հարությունյանը, Ա. Կիրակոսյանը, Է. Թադևոսյանը:

**Որոշեցին** – Ա. Գրիգորյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

**5. Լսեցին** - Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկման հարցը:

/ Զեկուցող՝ մ.գ.թ., դաս. Ն. Հունանյան/

Ն. Հունանյանը նշեց, որ մշտապես կատարվել է մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել է, որ ամբիոնի կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ դասախոսների կողմից բոլոր դասընթացների էլեկտրոնային հարթակներում տեղադրված են եղել առարկաների ԱՈՒՄՓ-ները կամ դասախոսությունները՝ ըստ

թեմաների, առարկայական նկարագրերը: Գրեթե բոլոր դասընթացների էջերում առկա է դասախոսների և ուսանողների համագործակցությանը միտված ակտիվություն. լրացուցիչ ուսումնական նյութերի տեղադրում, հարցերի քննարկում, ուսանողների պատրաստած ներկայացումների կամ մշակումների տեղադրում և այլն:

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը:

**Որոշեցին** – Ն. Հունանյան զեկույցն ընդունել ի գիտություն:

**Ընթացիկ հարցեր:**

**Լսեցին**- Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ՝ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը կրթական բարեփոխումների և վերականգնողական աջակցության կազմակերպման գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատաման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

**Արտահայտվեցին**՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, Կ.Գ.Թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը, մ.գ.դ., դոցենտ Պ.Հ.Պայրզյանը:

**Որոշեցին**- Հաստատել Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը կրթական բարեփոխումների և վերականգնողական աջակցության կազմակերպման գործընթացում» թեկնածուական աշխատանքի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ռ.Հարությունյանին:

**Նիստի նախագահ՝**

**Ս. Գրիգորյան**

**Նիստի քարտուղար՝**

**Ա. Օհանյան**

## ՔԱՂՎԱԾՔ

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» 2020 թ.-ի նոյեմբերի 16-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

**Լսեցին-** Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ՝ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը կրթական բարեփոխումների և վերականգնողական աջակցության կազմակերպման գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը, մ.գ.դ., դոցենտ Պ.Հ.Պայրզյանը:

**Որոշեցին-** Հաստատել Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը կրթական բարեփոխումների և վերականգնողական աջակցության կազմակերպման գործընթացում» թեկնածուական աշխատանքի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ռ.Հարությունյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից ներկա էր 16-ը, որից <<Կողմ>> քվեարկեց 16-ը, <<Դեմ>>՝ 0, <<Ձեռնպահ>>՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

**ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա նոյեմբերի 16-ին կայացած  
թիվ 4 նիստի անձանագրությունից**

**Լսեցին-** Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսի <<Արտթերապիա>> մասնագիտացման ուսանող Թագուհի Ստեփանյանի <<Թատրոնի դերի ուսումնասիրությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացման գործընթացում>> մագիստրոսական թեզի թեմայի փոփոխման հարցը:

**Արտահայտվեցին –** Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Է. Թադևոսյանը:

**Որոշեցին-** Հաստատել Թագուհի Ստեփանյանի <<Աուտիստիկ սպեկտրի խանգարում ունեցող ն/դ տարիքի երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացումը նկարչաթերապիայի և երաժշտաթերապիայի միջոցով>> ատենախոսության թեման:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը, Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

**ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա նոյեմբերի 16-ին կայացած  
թիվ 4 նիստի անձանագրությունից**

**Լսեցին-** Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսի <<Արտթերապիա>> մասնագիտացման ուսանող Թագուհի Ստեփանյանի <<Թատրոնի դերի ուսումնասիրությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացման գործընթացում>> մագիստրոսական թեզի թեմայի փոփոխման հարցը:

**Արտահայտվեցին –** Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Է. Թադևոսյանը:

**Որոշեցին-** Հաստատել Թագուհի Ստեփանյանի <<Աուտիստիկ սպեկտորի խանգարում ունեցող ն/դ տարիքի երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացումը նկարչաթերապիայի և երաժշտաթերապիայի միջոցով>> ատենախոսության թեման:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա դեկտեմբերի 7-ին կայացած նիստի

### Օրակարգ

1. <<Լոգոպեդիա>> մասնագիտացման առկա բակալավր 4-րդ, հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և <<Լոգոպեդիա>>, <<Էրգոթերապիա>> <<Արտթերապիա>> մասնագիտացման մագիստրատուրա առաջին և երկրորդ կուրսեր մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների քննարկում:
2. Հեռակա բակալավրիատի ուսումնական գործընթացի ժամանակացույցի քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

**1.Լսեցին-** <<Լոգոպեդիա>> մասնագիտացման առկա բակալավր 4-րդ, հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և <<Լոգոպեդիա>>, <<Էրգոթերապիա>>, <<Արտթերապիա>> մասնագիտացման մագիստրատուրա առաջին և երկրորդ կուրսերի մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների քննարկման հարցը:

Ամբիոնի վարիչի տեղակալ մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյանը նշեց, որ նիստի նպատակն է ավարտական կուրսերում իրականացվող ավարտական աշխատանքների իրականացման ընթացքին ծանոթանալը և այս ձևը պահպանվելու է ամեն ամիս, որոնց ընթացքում գիտական ղեկավարները կներկայացնեն հաշվետվություններ: Նշեց, նաև որ առկա խնդիրների դեպքում անհրաժեշտ է ներկայացնել զեկուցագրեր:

**Արտահայտվեցին-** Գ. Հովյանը, Ս. Կարապետյանը, Ն. Հունանյանը, Լ. Աղլոյանը, Ս. Հարությունյանը:

**Որոշեցին** –Ղեկավարներին հանձնարարել ավելի հետևողականորեն մոտենալ հարցին, սիստեմատիկ ձևով կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և հետևել կատարման ընթացքին:

**2. Լսեցին-** Հեռակա բակալավրիատի ուսումնական գործընթացի ժամանակացույցի քննարկման հարցը:

**Արտահայտվեցին** - Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Կիրակոսյանը:

**Որոշեցին-** Զեկույցն ընդունել ի գիտություն:

**3. Լսեցին-** Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ՝ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

**Արտահայտվեցին՝** Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, Կ.Գ.Թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյան :

**Որոշեցին-** Հաստատել Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» թեկնածուական աշխատանքի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ռ.Հարությունյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից ներկա էր 16-ը, որից <<Կողմ>> քվեարկեց 16-ը, <<Դեմ>>՝ 0, <<Ձեռնպահ>>՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

**ՔԱՂՎԱԾՔ**

**Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» 2020 թ.-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի**

**Լսեցին-** Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ՝ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատաման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյան :

**Որոշեցին-** Հաստատել Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» թեկնածուական աշխատանքի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ռ.Հարությունյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից ներկա էր 16-ը, որից <<Կողմ>> քվեարկեց 16-ը, <<Դեմ>>՝ 0, <<Ձեռնպահ>>՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### **ՔԱՂՎԱԾՔ**

**Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» 2020 թ.-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի**

**Լսեցին-** Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ՝ Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» խորագրով թեկնածուական աշխատանքի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյան :

**Որոշեցին-** Հաստատել Մերի Ալեքսանյանի «Համագործակցային աշխատանքի պլանավորումը հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աջակցության գործընթացում» թեկնածուական աշխատանքի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ռ.Հարությունյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից ներկա էր 16-ը, որից <<Կողմ>> քվեարկեց 16-ը, <<Դեմ>>՝ 0, <<Ձեռնպահ>>՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### **ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա դեկտեմբերի 10-ին կայացած  
թիվ 6 նիստի անձանագրությունից**

**Լսեցին-** Ամբիոնի հայցորդ Գրիգորի Արտաշեսի Մամյանի 2020թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

**Արտահայտվեցին** – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը, Ս.Կարապետյանը:

**Որոշեցին**- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Գրիգորի Արտաշեսի Մամյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### **ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա դեկտեմբերի 10-ին կայացած  
թիվ 6 նիստի անձանագրությունից**

**Լսեցին**- Ամբիոնի հայցորդ Աննա Հայկի Մալխասյանի 2020թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

**Արտահայտվեցին** – Գ. Հովյանը, Ս. Կարապետյանը, Ս. Փալիկյանը:

**Որոշեցին**- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Աննա Հայկի Մալխասյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### **ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա դեկտեմբերի 10-ին կայացած  
թիվ 6 նիստի անձանագրությունից**

**Լսեցին**- Ամբիոնի հայցորդ Սոֆյա Ազատի Հովսեփյանի 2020թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

**Արտահայտվեցին** – Մ. Հարությունյանը, Ս. Գրիգորյանը:

**Որոշեցին**- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Սոֆյա Ազատի Հովսեփյանին:

Ամբիոնի նիստի 18 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝

Ա. Օհանյան

### **ՔԱՂՎԱԾՔ**

**Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի  
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
2020-2021 ուս. տարվա դեկտեմբերի 10-ին կայացած  
թիվ 6 նիստի անձանագրությունից**

